



**Հովհաննես Թումանյան,
Կոմիտաս,
դրվագ
«Վերմատուն»
լուսանկարից**

կերպարի, աշխատասիրության, իր տեսակին տեր կանգնելու և ավանդապաշտ լինելու մասին, ինչի համար էլ հայ ժողովուրդը մշտապես պայքարի մեջ է եղել: Ինչևէ, ցանկությունս է մի պահ ցույց տալ զարմանալիորեն համընկնող այն զուգահեռները թե՛ ինչ է ապրել նա իր ժամանակին, կրկնվում է և հիմա:

Հայոց մյուս խոշոր մտածող ու բանաստեղծ Պարույր Սևակի միշտ արդիական ու տեղին խոսքերը հիշեցի, որի առաջին տողը շատ «սագում» է Թումանյանի մարդուն ու բանաստեղծին. «Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում»:

Այս իմաստով տեղին է Ավետիք Բասակյանին ուղղված Թումանյանի հայտնի նամակը, որտեղ բացահայտ է նրա խոր ցավն ու անհանգստությունը Հայրենիքի ճակատագրի նկատմամբ, ավելին՝ նա հանճարեղորեն նկատում է, գուշակում քաղաքական աշխարհում տեղի ունեցող կործանարար «խաղերը», «տերերի» անխիղճ ու անբարո վարքագիծը: Ղարսի պատերազմում հող հայրենիին նվիրաբերած նրա երկու տղաների կյանքերը, մի շարք հողվածներում ու նամակներում արտահայտած իր որոշակի մտահոգությունները, նրա ազգանվեր գործերն ու շատ այլ վկայություններ, վառ ապացույցն են այն բանի, որ Մեծ լոռեցին ամեն կերպ մասնակից է եղել յուր ժողովրդի համար ճակատագրական իրադարձություններին, իսկ հանճարեղ գրիչը դրանց լավագույն նկարագրողն է.

Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել ներել ու սիրել,-
Վատը՝ լավ եմ տեսել ես:

(2. էջ 72)

Սակայն դառը ճակատագիրն ու ծանր կյանքը պոետի մարդ տեսակին չկարծրացրին: Այդքան քնարական ու երգեցիկ պոեզիան, նրա նրբանուրբ, զգայուն հոգու թրթռների արտացոլանքն էր, որը կարծես իր ուրույն միաձուլումը գտավ բանաստեղծի «Այս ինչ լավ են, սարի վրա» երգ-բանաստեղծության մեջ: Սա թերևս միակ երգն է, որի բառերի ու երաժշտության հեղինակն է նա: Բառերի ու երաժշտության կատարյալ համադրությունը զեփյուռի նուրբ շոյանք է հիշեցնում, իսկ երաժշտության այսքան հայեցի ու դասական լինելը ուղղակիորեն զարմացնում է: Երաժշտությամբ շաղախված մի ամբողջ աշխարհ է կրել իր մեջ բանաստեղծը, որտեղ ան-

պայմանորեն իր մտերիմ բարեկամի՝ Կոմիտասի դերակատարումը կար նաև: Այս երկու գերհանճարների ստեղծագործ մտքի միաձուլումը՝ «Անուշ» պոեմն օպերայի վերածելու Կոմիտասի մեծ երազանքի իրականացումը կլիներ, որը հաստատ հայ երաժշտարվեստին մի նոր փայլատակում կտար, ինչը ցավոք չիրականացավ...

Հայ գրականության ու երաժշտարվեստի մեծագույն վարպետների սիրտն ու գրիչը համահունչ էին հային բաժին հասած այդօրյա դառն իրականության հետ, ավելին, նրանք ուղղակիորեն կրողն էին ու բախտակիցն ազգի ճակատագրի:

Ստեղծագործական կյանքի ու հետաքրքրությունների առումով որքան հեռու, նույնքան էլ մոտ են Կոմիտասի և Թումանյանի ուղիները: Իր պատճառն ու հետևվանքն ունի, որ մանկությանս հուշապատումի մեջ Կոմիտաս վարդապետի կերպարը մշուշոտ է եղել, ինչն ուղղակիորեն կապված է խորհրդային շրջանում պատմական որոշ շերտերի լուսաբանման արգելքի՝ դասագրքերում Վարդապետի կենսագրության այնքանով որքանով լուսաբանման հետ: Այդ բացը լրացրեցին հետագա տարիներին ինքնուրույն ուսումնասիրություններին բացահայտումները: Արդյունքում՝ դարձա Կոմիտասի երաժշտության ու պոեզիայի վարդապետության «գերին» ու նրան էլ Թումանյանի հետ միասին պահեցի հոգուս մեջ, որպես գոյությանս անհրաժեշտության մի մաս:

Երբեմն միտք եմ անում. ինչ երանելի վայելք կլիներ երկու սրտացավ հանճարների գոյության վկան լինել, սակայն այս հեռահար ցանկությունը խորհելու տեղիք է տալիս: Ծանր ու դժվարին կյանք են ապրել նրանք, ոչ միայն ակամայից այդ ժամանակի ծնունդը լինելու պատճառով, այլև սեփական գաղափարական մտածողության ու իրենց պատկանելության խորը գիտակցման հետևանքով: Կարծում եմ, ժամանակն է ձեռքբազատվելու խորհրդային գաղափարախոսությունների ներքո նրանց մեղանխույլի ու տխուր ներկայացված լինելու միտումից: Սրա ճիշտ պատասխանը մեկն է. ժամանակաշրջանն իհարկե իր ազդեցությունն է ունեցել այսօրինակ հանճարների վրա և իր հորձանուտում «մատաղացի» նման փշրել առանց այն էլ նրանց մորմոքող սրտերը, սրտեր՝ որ բարբախել են սերունդների համար, որ երազանքների օվկիանոսում երջանկություն ու վայելք են զգացել ամենափոքր հաջողությունից, որ մանկան գուլպայությամբ ու հանճարի գիտակցությամբ լի ժառանգություն են թողել: Սակայն, այսօրինակ Մեծերի ստեղծագործությունների մեջ ոչ միտումնավոր տխրության կարմիր հետագիծը դիտմանս չէ, այլ իրականության խորն արտացոլում: Հանճարներ կան, ովքեր աշխարհ են գալիս պատմության խորխորատներից և ի վերուստ լուսավորված հոգով, անմար կանթեղի նման ուղի են հարթում դեպի ժամանակի հեռուները:

Երբ խորանում ես նրանց կյանքի մանրամասների մեջ, ուսումնասիրում ժամանակակից մեծերի հետ նրանց նամակագրական կապերն ու ստեղծագործական ժառանգությունը, ընթերցում կարծիքներ նրանց մասին, ակնհայտ է դառնում, որ նրանք կենսասեր ու

կենսախինդ, վառ երևակայության տեր ու հումորով, լուսավոր անձինք են եղել: Այս միտքն ավելի շատ առնչվում է Կոմիտասի հետ, ում կենսագրությունը հանրայնացվում է նրա կյանքի դեռևս չբացահայտված էջերի ոչ ճիշտ փաստագրմամբ:

Ճիշտ աղամամութի էր նման նրանց կյանքը, սակայն նրանք չխարխալեցին, այլ ապրեցին արևածագի հավատով, ավաղ, որը մի նոր փայլատակում կարող էր տալ նրանց աստղային մտքին: Այս երկու հայ հանճարների ստեղծագործական կյանքի համադրման հիմքում ընկած է նրանց զգացականությունը, որն է՝ երաժշտությունը պոեզիայում և պոեզիան երաժշտության մեջ: Ինչպես Թումանյանի պոետիկ հանգավորումներից երաժշտություն է հնչում, նույնպիսի հմայքով Կոմիտասի երաժշտությունից պոեզիայի շունչն է ելնում: Այլ կերպ ասած երաժշտությունն ու պոեզիան նրանց արարի աներևույթ միասնությունն են ու անթաքույց արտահայտությունը:

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Գովի թևին թռչելով՝
Փերիները սարի գլխին
Դավաքվեցին գիշերով...

(3. էջ 120)

«Անուշ» պոեմ, Նախերգանք
ԳՈՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Եվ այս գիշեր, իմ երազում քեզ հետ մեկտեղ պարեցինք,
Սեր-հոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին...

(4. էջ 71)

«Իմ երազում» բանաստեղծություն
ԿՈՄԻՏԱՍ

Հանգավորման ինչպիսի նմանություն, մտքի ինչպիսի թարմություն է բուրում նրանց պոեզիայից: Ահա այսպիսին է նրանց սերը՝ տիեզերական ու անաղարտ, սիրառատ ու քնքուշ իրենց սրտերի նման: Նրանք զարմացնում են իրենց հանճարեղ պարզությամբ, կրկին վերահաստատելով, որ ամեն հանճարեղ բան պարզ է իր բնույթով, բայց ոչ էությամբ ու նշանակությամբ: Սակայն, երաժիշտ և պոետ Կոմիտասն առավել մտածելու տեղիք է տալիս, թե ինչպես՝ ապրելով օտար միջավայրում, կարողացավ թափանցել հայոց բառ ու բանի խորքերը, ոչ միայն վեր հանեց նոր բառեր, այլև ստեղծեց իրենը:

Կոմիտաս-Թումանյան ժամանակակից հանճարներ

որ զարմանալիորեն կարծես ստեղծագործում էին նույն տոնայնության մեջ, միասնաբար զգալով դարի հեքը:

Կարևոր չէ, թե երբ են ծանոթացել ազգի այս Մեծերը, վայելելով իրար ժամանակակիցը լինելու պատիվը, սակայն զգում էին ու գիտակցում, որ նույն նավի վրա են, և որ ժամանակի խնդիր ունեն՝ մի կյանքն իրենց բավարար չէ անելու այն, ինչ կարող էին: Թումանյանը դժգոհում էր, որ ժամանակ չունի լիարժեք պոեզիայով զբաղվելու, իսկ Կոմիտասը ժամանակի սղությունն զգալով, իր ստեղծած գոհարները պահ էր տալիս ուրիշին:

Ու թեև նրանք չիրականացած միասնական երազանքներ ունենալով երկար չապրեցին, մնալով է՝ պատմության էջերում մնացին որպես խոսքի և երաժշտության գեղագետ ու նորարար, ժողովրդից սովորող, բայց և մեծ վարպետ-ուսուցիչ, ստեղծող ու ստեղծագործող՝ մշտապես օրինակ ունենալով ժողովրդակալներ: Ճիշտ է ասված, որ հանճարները չեն մեռնում՝ նրանք վերածնվում են շնորհիվ իրենց թողած ժառանգության:

Ամենախմաստնացած մարդն անգամ Կոմիտաս վարդապետից ու Հայոց Մեծ բանաստեղծից բան ունի սովորելու, վկայությունը՝ նրանց թողած ժառանգությունն ու Մարդ լինելը:

Մահը մահ չէ նմանօրինակ մեծերի համար, այլ կյանքից հետո Լուսի ու Հավերժի անվերջանալի մի ճանապարհ, որով գալիս ու գնում են միայն նրանք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Թումանյան Հ., Քառյակներ, Եր., 2009 թ.: *Thumanyan H., Qar'yakner, Yer., 2009 th.*
2. Թումանյան Հ., Բանաստեղծություններ, քառյակներ, պոեմներ, լեզենդներ և բալլադներ, Եր., 1986 թ.: *Thumanyan H., Banastetsuthyunner, qaryakner, poemner, legendner ev balladner, Yer., 1986 th.*
3. Թումանյան Հ., Հայկական ժողովրդական հեքիաթներ, պոեմներ, բալլադներ և լեզենդներ, Եր., Արեգ, 2011թ.: *Thumanyan H., Haykakan joghovrdakan heqiathner, pvoemner, balladner ev legendner, Yer., Areg, 2011 th.*
4. Կոմիտաս, Ասույթներ, քաղվածքներ, կենսագրական և մատենագրական տեղեկություններ, Եր., 1969 թ.: *Komitas, Asuythner, qaghvatsqner, kensagrakan ev matenagrakan teghekuthyunner, Yer., 1969 th.*

Բանալի-բառեր. Հովհաննես Թումանյան, տիեզերական սեր, Կոմիտաս վարդապետ, Դեբեդ, Հայոց մեծ բանաստեղծ, «Անուշ» օպերա, Կարսի պատերազմ, Ավետիք Իսահակյան, Պարույր Սևակ, գեղագետ, աղամամութ, Լուսի ու Հավերժի ճանապարհ:

Ключевые слова: Ованес Туманян, Вселенская любовь, Комитас Архимандрит, Дебед, великий армянский поэт, опера “Ануш”, Карсская война, Аветик Исаакян, Паруйр Севак, путь Света и Вечности.

Keywords: Hovhannes Tumanyan, cosmic love, vardapet Komitas, Debed, great Armenian poet, "Anush" opera, the Battle of Kars, Avetik Isahakyan, Paruyr Sevak, aesthete, darkness, road to Light and Eternity.

Տեղեկություններ հեղինակի մասին. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇ ՄԵՏՐՈՊՈՒ [ծ. 14.12.1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, ՀՀ)]: Մենակատար քանոնահար, ժտոնալիստ, ԵՊԿ դասախոս: Հեղինակ է քանոն նվագարանի չորս դասագրքերի՝ «Անմար գոհարներ» գիրք 1-ին (հրատ. 2005 թ.), Գիրք 2-րդ (Եր., 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» գիրք 3-րդ (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), մի շարք հոդվածների՝ «Նրան էլ են փորձում յուրացնել» (հակիրճ տարբերակ //Ավանգարդ, 8-14 ապրիլ 2009 թ.), «Բարեկամությունը ծնվում է ժպիտից», //Երաժշտական Հայաստան, ամսագիր, 1-3 (44-45) 2013 թ.), «Արմինե Պողոսյան. կոչումով մանկավարժ», //Երաժշտ ամսաթերթ, ապրիլ 2013 թ., «...Իսկ բարեկամությունը շարունակվում է», //Հայաստան, շաբաթաթերթ 13-20 դեկտեմբերի 2012 թ., «Երջանկությունը թևեր է տալիս, հայրենասիրությունն արժանապատվության զգացում», //Երաժշտական Հայաստան, ամսագիր: Ունի հոդվածներ նաև «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ պաշտոնաթերթում, «Մարտիկ» Արցախի Հանրապետության պաշտոնաթերթում, Բեյրութի (Լիբանան) «Ժսունակ» ամսաթերթում և այլ: Աշխատել է որպես քանոնահարուհի՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Չերժինսկու անվ. սով. խոզի երաժշտական դպրոցում, 1980–1986 թթ. Հայաստանի Թ. Ալթունյանի անվ. Երզնկ-պարի պետ. անսամբլում, 1986–1987 թթ. Հայաստանի Գուսանյան անվ. անսամբլում, 1990–1991 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ռադիոհեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլում, 1994–1997 թթ. ղեկավարել է Երևանի Հատուկ գնդի ժողովրդական գործիքների անսամբլը և եղել է քանոնահարը: Դասավանդել է՝ 1990–2009 թթ. Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 2009-ից մինչև այժմ Կ. Մարաշյանի անվ. երաժշտական դպրոցում՝ ժողովրդական գործիքների բաժնի վարիչ, վարում է քանոնի դասարանը: 2019-ից մինչև այժմ Ա. Բաբաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջում՝ դասավանդում է մանկավարժական պրակտիկա:

Сведения об авторе: КИРАКОСЯН АНУШ МЕСРОПОВНА (род. 14.12.1957, г. Алаверди, Лорийский р-н, РА), солистка – канонистка, педагог ЕГК. Автор четырех учебников для канона: “Анмар гоарнер”, ч. 1 (2005), часть 2 (2010); “Переложения для канона”, 3-я книга (2010); “Концертные пьесы для канона Хачатур Нерсисяна” (2010). Автор ряда статей: “Его тоже хотят присвоить” (краткая версия / /Авангард 8-14 апреля 2009 г., “Дружба рождается с улыбкой” (/ /Музыкальная Армения 1-3 (44-45) 2013 г., “Армине Погосян. педагог по призванию” / /Музыкант, апрель 2013 г.), “...А дружба продолжается” / /Еженедельник Айастан, 13-20 декабря 2012 г. и другие. Печатается в газетах “Еражишт”, “Ай зинбор”, “Мартик”, в журналах “Музыкальная Армения”, “Хоснак”, Бейрут (Ливан). Работала: с 1979 по 1983 в музыкальной школе Дзержинского совхоза Армавирского р-на; с 1980 по 1986 - в Гос.заслуженном ансамбле песни и танца Армении им. Т. Алтуняна; Работала в Ансамбле народных инструментов им. А. Мерангуляна Гостелерадио Армении(1993-2001), канонистка и руководитель Ансамбля народных инструментов Ереванского особого полка (1994-1997). Преподавала: в Госконсерватории им. Комитаса (1990 -2009); зав.отделением народных инструментов, педагог по классу канона в ДМШ им. К. Сараджяна (с 2009 по сей день), ведет педагогическую практику в Муз-пед. колледже им.А.Бабаджяна (с 2019 по сей день); с 1986 по 1987 - в Гос. гусанском ансамбле; с 1990 по 1991 - в Гос. ансамбле танца Армении; с 1993 по 2001 - в Гос. ансамбле народных инструментов Радио и Телевидения РА им. А. Мерангуляна; с 1990 по 2009 - в Госконсерватории им. Комитаса; с 2009 по сей день - в ДМШ им. К. Сараджяна.

Information about the author: KIRAKOSYAN ANUSH MESROP (was born on 14 December 1957 in Armenia, Alaverdi). A soloist kanon player, as well as a lecturer of music at YSC Anoush Kirakosyan is an author of four books including "Eternal diamonds 1" (2005), "Eternal diamonds 2"(2010), "Works for kanon" (2010) and "Khachatur Nersisyan's concert plays for kanon" (2010). She also wrote a number of articles including "They want to make them theirs as well" (brief version in "Avangard", 8-14 April 2009), "Friendship is born from a smile" (/ /Musical Armenia" journal, 1-3 November, 2013), "Armine Pogosyan titled teacher" ("Musician" Yerevan State Conservatory magazine, April 2013), "...But the friendship is going on", / /Armenia" newspaper, 13-20 December 2012, "Happiness gives wings, the patriotism - feeling of dignity", / /Musical Armenia journal, and many more. She's also being published on "Musical Armenia" official magazine of the YSC, "Musician" newspaper, "Armenian soldier" the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Armenia, "Fighter" the official newspaper of the Ministry of Defence of the Republic of Artsakh, Lebanese (Beirut) "Speaker" magazine and not only. In different time periods she worked in different places among which were: 1979-1983 The musical school of the city Hoktemberian, 1980-1986 Tatul Altunyan Armenian state song & dance ensemble, 1986-1987 Armenian State Ensemble Minstrel Folk Songs of Armenia, 1990-1991 Armenian State Dance Ensemble, In 1993-2001 has been working at Public Radio Aram Merangulyan Ensemble of Folk Instruments. In 1994-1997 she was qanun player and the Director of the Ensemble of Folk Instruments of the Yerevan Special Regiment. In 1990-2009 was a pedagogue at the YSC, and since 2009 is qanun teacher and the Head of the Department of Folk Instruments at K. Saradjian Music School. Since 2019 is teaching Pedagogical Practice at the A. Babajanyan Music College. 1990-2009 Yerevan State Conservatory after Komitas, 2009 - present Musical school after K. Sarajyan.

Резюме

Канонистка-солистка, преподаватель, журналист **Ануш Месроповна Киракосян.** - “**Бесконечный путь света и вечности**”.

Статья основана на изложении психологического и морального воздействия на автора двух армянских гениев: музыкального искусства - Комитаса и литературы - Ованеса Туманяна. Это сопровождало ее с самого детства, стало образом всей сознательной жизни и повлияло на процесс становления как музыканта и журналиста. Интересно само сочетание выдающихся личностей, что еще больше подкрепляет факт бесконечного бытия гениев в жизни армянского народа.

Summary

Pedagogue at YSC after Komitas, soloist, kanon player **Anoush Mesrop Kirakosyan.**- “**The endless road of the light and eternity**”.

The article is the expression of the psychological and moral influence that the two Armenian major geniuses Komitas and H. Tumanyan had on the author in terms of music and literature. This has followed the author since her childhood and became a mainstream. It also has its influence on the formation of her personality as a musician and journalist. The combination of the two characters underlines their eternal presence in the everyday life of the Armenian nation which is quite interesting.